



ԻՇԻԾ
www.ichd.org

Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն

International
Center for
Human
Development

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Պ Ի Ր

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՂԱՇԻՆՔՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19 Ս ա յ ա թ Ն ո վ ա , Եր եւ ա ն

Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Թուրքիան որպես չափավոր իսլամի մոդել

Իրաքի պատերազմի և քրդական հիմնախնդրի շուրջ աճող մտահոգության արդյունքում թուրքական հասարակության մեջ աճում են հակաամերիկյան տրամադրությունները: Իրաքի խնդիրը, թերևս, կարելի է աղետաբեր համարել Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների համար: ԱՄՆ զինվորականների և քրդերի միջև դրական հարաբերությունները Թուրքիայում ազգայնականության մեծ ալիք են բարձրացրել, ինչը լուրջ սպառնալիք է երկրի արևմտացման և իբրև աշխարհիկ պետության հիմնօրինակ հանդես գալու համատեքստում: Հնարավոր է, որ ի չիք դառնան նաև Եվրամիություն մուտք գործելու հույսերը: Որպես այդպիսին, ԱՄՆ-ն՝ Միջին Արևելքի հանդեպ իր նկրտումներով, Թուրքիայի կողմից ընկալվում է որպես սպառնալիք երկրի ազգային անվտանգության համար, ինչպես նաև «չափավոր իսլամի մոդելի» փլուզման հնարավոր գործընթացը հրահրող լուրջ գործոն:

Թուրքիայի այլընտրանքային դաշինքները. անորոշ ապագա տարածաշրջանում

Երբեմն փաստարկվում է, թե Թուրքիան ժողովրդավարական պետություն է, միգուցե ոչ լիբերալ, բայց, այնուամենայնիվ, ժողովրդավարական: Այս պնդումը, սակայն, հաշվի չի առնում Թուրքիայի վերաբերմունքը քրդերի հանդեպ, ինչն իրականում Թուրքիային դուրս է դնում ժողովրդավարության շրջանակներից: Այսպիսով, Եվրամիություն մուտք գործելու Թուրքիայի հույսերը չպետք է հիմնվեն այն մի քանի, այսպես կոչված, փոխզիջումների վրա, ինչը նա արեց Հյուսիսային Կիպրոսի հարցում՝ ընդունելով Անանի պլանի վերաբերյալ հանրաքվեն: Այս հանրաքվեի արդյունքները վիատեցրին թուրք հասարակությանը և կառավարությանը, քանի որ հակամարտության լուծմանն ուղղված Հյուսիսային Կիպրոսի ջանքերը չխրախուսվեցին: Այսպիսով, Թուրքիայում Եվրամիության քաղաքականությունն ընկալվում է հետևյալ կերպ. «ինչ էլ անենք, միևնույնն է, նրանք ավելին են պահանջելու»: Արդյունքում, իրենց նկատմամբ Արևմուտքի մտադրությունների հանդեպ Թուրքիայում աճում է հոռետեսությունը: Կարծիք կա, թե դժգոհություն-աճող ազգայնականություն-դժգոհության սրացում արատավոր շրջանը սառեցրել է թուրքամերիկյան հարաբերությունները և հող է նախապատրաստում այլընտրանքային ռազմավարական դաշինքների՝ մասնավորապես Ռուսաստանի հետ դաշնակցելու համար:

Թուրքական ազգայնականությունը Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի դեմ. վերջին հետհաշվարկ

Այս դեպքում հարց է ծագում. ինչպե՞ս է ազդելու կարծեցյալ թուրքական ազգայնականությունը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի և Թուրքիա-Հայաստան հարաբերությունների վրա, և ինչպիսի քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել Թուրքիայի արտաքին քաղաքականության հունը այնպես փոխելու համար, որպեսզի խուսափենք տարածաշրջանային բախումից: Առաջարկ կա, որ աչքի առաջ ունենալով երկու երկրների միջև լավ հարաբերությունների հաստատման երկարաժամկետ տեսլականը, ինչպես նաև հավանական, բայց չերաշխավորված Հայոց ցեղասպանության ճանաչումն «ավելի հարուստ և կայուն» Թուրքիայի կողմից, Հայաստանը պետք է վստահության կառուցմանը նպաստող միջոցներ ձեռնարկի՝ անորոշ ժամանակով հետաձգելով Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, ինչպես նաև նպաստելով Եվրամիություն Թուրքիայի մուտքին: Այս առաջարկներից մի քանիսը, սակայն, իրատեսական չեն՝ ելնելով այն հանգամանքից, որ խոստումների ի կատար ածման երաշխիքները բացակայում

են: Շրջափակման տեսքով թուրքիայի շարունակական քաղաքական ներգրավվածությունը Ղարաբաղի հակամարտությանն այնպիսի տպավորություն չի ստեղծում, թե նա հետաքրքրված է հանդես գալ որպես անաչառ միջնորդ կամ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Չայաստանի հետ: Եթե թուրքիան ցանկանում է պահպանել իր ներկա դիրքորոշումը Ղարաբաղի հակամարտության հարցում և նույնիսկ ավելին՝ պահանջել, որ Չայաստանը որոշակի քայլեր ձեռնարկի այդ ուղղությամբ, ուրեմն պետք է հրաժարվի այն պնդումներից, թե ինքը չեզոք, անաչառ պետություն է, որը հետաքրքրված չի հակամարտությունների բորբոքմամբ, միաժամանակ պետք է մոռանա Եվրամիություն մտնելու իր հույսերի մասին: Մյուս կողմից, սակայն, թուրքիան պետք է պահպանի իր դեմքը, եթե նա ցանկանում է փոխել իր քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ:

Կա՞րողյոք լուծում, թե փակուղու առջև ենք

Ելնելով վերոհիշյալ փաստարկներից՝ թուրքիայի և Չայաստանի միջև գոյություն ունեցող քաղաքական համայնապատկերն իրականում փոխելու համար անհրաժեշտ է երկուստեք լուրջ քայլեր ձեռնարկել, որպեսզի ստեղծվի վստահության միջավայր, որը կնպաստի երկու երկրների միջև երկխոսության հաստատմանը: Պարզ է, որ եթե թուրքիան ցանկանում է մոտենալ Եվրամիությանը և ցանկանում է նվազ դիմադրություն տեսնել այդ նույն Եվրամիության հայազգի քաղաքացիների կողմից, ապա նա ստիպված է լինելու փոխել իր արտաքին քաղաքականությունը Ղարաբաղյան հակամարտության և թերևս նաև Ցեղասպանության վերաբերյալ: Սակայն, ինչ կարող է, կամ ավելի շուտ, ինչ պետք է անի Չայաստանը: Չայաստանի անմիջական հնարավորությունների սահմաններում գտնվող հիմնական խնդիրները կարելի է ամփոփել հետևյալ կերպ՝

- Չայաստանի արտաքին քաղաքականության զինանոց ներմուծել մեղմ քաղաքականության գործիքներ՝ թուրքիայի հետ դիվանագիտական այնպիսի հարաբերություններ հաստատելու հնարավորությունների ստեղծման նպատակով, որոնք զերծ են թաքնված օրակարգով քողարկված լինելու մեղադրանքներից:
- Թուրքիայի նկատմամբ «ճնշման» քաղաքականությունից անցում կատարել դեպի առավել ճկուն և սկզբունքների/չափանիշների վրա հիմնված արտաքին քաղաքականության: Չայաստանը դեռևս չի բարձրաձայնել, թե ինչպիսի թուրքիա է նա ցանկանում տեսնել:
- Թուրքիան Եվրամիության կազմում տեսնելու հարցում Չայաստանի շահն առավել հնչեղ դարձնել՝ համահունչ սփյուռքահայության և թուրք քաղաքացիների շահերին:
- Միջոցներ ձեռնարկել Չայաստանի, թուրքիայի և Ադրբեջանի միջև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի և Չայաստանի շրջափակման վերաբերյալ ներկա փոխներփակված դիրքորոշումները վերանայելու նպատակով: Պետք է հստակեցնել, որ Չայաստանը ցանկանում է թուրքիային տեսնել որպես Եվրամիության անդամ, միայն ոչ Լեռնային Ղարաբաղի հայերի հաշվին: Ավելին, թուրքիան Եվրամիության անդամ չպետք է դառնա իր դաշնակցի՝ Ադրբեջանի հաշվին:

Այս կետերը միայն առաջին քայլերն են երկու երկրների և ժողովուրդների միջև կապերի հաստատման երկար ճանապարհին: Գործընթացի զարգացման հետ համատեղ, շատ ավելին կպահանջվի երկու կողմերից: Սակայն այս քայլերը շատ մոտ ապագայում ձեռնարկելն արդեն իսկ հրատապ խնդիր է, որպեսզի հնարավոր լինի խուսափել ծայրահեղականության ալիքից, որը սպառնում է թե՛ երկու երկրների և թե՛ ամբողջ տարածաշրջանի կայունությանն ու բարեկեցությանը:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2005թ-ի հուլիսի 19-ի «Հարավային Կովկաս՝ տարածաշրջանային, քաղաքական և տնտեսական հարցեր» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կրոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ: